

3688

2005/6

17. 11. 1917
 18. 11. 1917
 19. 11. 1917
 20. 11. 1917
 21. 11. 1917
 22. 11. 1917
 23. 11. 1917
 24. 11. 1917
 25. 11. 1917
 26. 11. 1917
 27. 11. 1917
 28. 11. 1917
 29. 11. 1917
 30. 11. 1917
 31. 11. 1917
 1. 12. 1917
 2. 12. 1917
 3. 12. 1917
 4. 12. 1917
 5. 12. 1917
 6. 12. 1917
 7. 12. 1917
 8. 12. 1917
 9. 12. 1917
 10. 12. 1917
 11. 12. 1917
 12. 12. 1917
 13. 12. 1917
 14. 12. 1917
 15. 12. 1917
 16. 12. 1917
 17. 12. 1917
 18. 12. 1917
 19. 12. 1917
 20. 12. 1917
 21. 12. 1917
 22. 12. 1917
 23. 12. 1917
 24. 12. 1917
 25. 12. 1917
 26. 12. 1917
 27. 12. 1917
 28. 12. 1917
 29. 12. 1917
 30. 12. 1917
 31. 12. 1917
 1. 1. 1918
 2. 1. 1918
 3. 1. 1918
 4. 1. 1918
 5. 1. 1918
 6. 1. 1918
 7. 1. 1918
 8. 1. 1918
 9. 1. 1918
 10. 1. 1918
 11. 1. 1918
 12. 1. 1918
 13. 1. 1918
 14. 1. 1918
 15. 1. 1918
 16. 1. 1918
 17. 1. 1918
 18. 1. 1918
 19. 1. 1918
 20. 1. 1918
 21. 1. 1918
 22. 1. 1918
 23. 1. 1918
 24. 1. 1918
 25. 1. 1918
 26. 1. 1918
 27. 1. 1918
 28. 1. 1918
 29. 1. 1918
 30. 1. 1918
 31. 1. 1918
 1. 2. 1918
 2. 2. 1918
 3. 2. 1918
 4. 2. 1918
 5. 2. 1918
 6. 2. 1918
 7. 2. 1918
 8. 2. 1918
 9. 2. 1918
 10. 2. 1918
 11. 2. 1918
 12. 2. 1918
 13. 2. 1918
 14. 2. 1918
 15. 2. 1918
 16. 2. 1918
 17. 2. 1918
 18. 2. 1918
 19. 2. 1918
 20. 2. 1918
 21. 2. 1918
 22. 2. 1918
 23. 2. 1918
 24. 2. 1918
 25. 2. 1918
 26. 2. 1918
 27. 2. 1918
 28. 2. 1918
 29. 2. 1918
 30. 2. 1918
 31. 2. 1918
 1. 3. 1918
 2. 3. 1918
 3. 3. 1918
 4. 3. 1918
 5. 3. 1918
 6. 3. 1918
 7. 3. 1918
 8. 3. 1918
 9. 3. 1918
 10. 3. 1918
 11. 3. 1918
 12. 3. 1918
 13. 3. 1918
 14. 3. 1918
 15. 3. 1918
 16. 3. 1918
 17. 3. 1918
 18. 3. 1918
 19. 3. 1918
 20. 3. 1918
 21. 3. 1918
 22. 3. 1918
 23. 3. 1918
 24. 3. 1918
 25. 3. 1918
 26. 3. 1918
 27. 3. 1918
 28. 3. 1918
 29. 3. 1918
 30. 3. 1918
 31. 3. 1918
 1. 4. 1918
 2. 4. 1918
 3. 4. 1918
 4. 4. 1918
 5. 4. 1918
 6. 4. 1918
 7. 4. 1918
 8. 4. 1918
 9. 4. 1918
 10. 4. 1918
 11. 4. 1918
 12. 4. 1918
 13. 4. 1918
 14. 4. 1918
 15. 4. 1918
 16. 4. 1918
 17. 4. 1918
 18. 4. 1918
 19. 4. 1918
 20. 4. 1918
 21. 4. 1918
 22. 4. 1918
 23. 4. 1918
 24. 4. 1918
 25. 4. 1918
 26. 4. 1918
 27. 4. 1918
 28. 4. 1918
 29. 4. 1918
 30. 4. 1918
 31. 4. 1918
 1. 5. 1918
 2. 5. 1918
 3. 5. 1918
 4. 5. 1918
 5. 5. 1918
 6. 5. 1918
 7. 5. 1918
 8. 5. 1918
 9. 5. 1918
 10. 5. 1918
 11. 5. 1918
 12. 5. 1918
 13. 5. 1918
 14. 5. 1918
 15. 5. 1918
 16. 5. 1918
 17. 5. 1918
 18. 5. 1918
 19. 5. 1918
 20. 5. 1918
 21. 5. 1918
 22. 5. 1918
 23. 5. 1918
 24. 5. 1918
 25. 5. 1918
 26. 5. 1918
 27. 5. 1918
 28. 5. 1918
 29. 5. 1918
 30. 5. 1918
 31. 5. 1918
 1. 6. 1918
 2. 6. 1918
 3. 6. 1918
 4. 6. 1918
 5. 6. 1918
 6. 6. 1918
 7. 6. 1918
 8. 6. 1918
 9. 6. 1918
 10. 6. 1918
 11. 6. 1918
 12. 6. 1918
 13. 6. 1918
 14. 6. 1918
 15. 6. 1918
 16. 6. 1918
 17. 6. 1918
 18. 6. 1918
 19. 6. 1918
 20. 6. 1918
 21. 6. 1918
 22. 6. 1918
 23. 6. 1918
 24. 6. 1918
 25. 6. 1918
 26. 6. 1918
 27. 6. 1918
 28. 6. 1918
 29. 6. 1918
 30. 6. 1918
 31. 6. 1918
 1. 7. 1918
 2. 7. 1918
 3. 7. 1918
 4. 7. 1918
 5. 7. 1918
 6. 7. 1918
 7. 7. 1918
 8. 7. 1918
 9. 7. 1918
 10. 7. 1918
 11. 7. 1918
 12. 7. 1918
 13. 7. 1918
 14. 7. 1918
 15. 7. 1918
 16. 7. 1918
 17. 7. 1918
 18. 7. 1918
 19. 7. 1918
 20. 7. 1918
 21. 7. 1918
 22. 7. 1918
 23. 7. 1918
 24. 7. 1918
 25. 7. 1918
 26. 7

glenziep & c

glenielep 2

15

V-14

14 JUL 2009

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

Մ. ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Կ Ա Մ Ք Ի
ԴԱՄՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ.
ԸՆՏԱՆԻՔԸ

15
Մ-14

ԼՈՒՍՀՐԱՏ

ԹԵՐԵՎԱՆ

1999

(136)

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՍԱՏ

15

Մ-14

Մ. ՄԱԶՄԱՆՅԱՆ

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Կ Ա Մ Ք Ի
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ
ԸՆՏԱՆԻՔԸ

Լ ՈՒՍՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1939

Պատ. խմբագիր՝ Մ. Արմենյան
Սրբագրիչ՝ Մ. Հախնազարյան



20272-59

Գլխավորի լիազոր Վ.—2025 Պատվեր № 454 Տիրաժ 4000
Պետական համալսարանի հրատարակչության տպարան, Յերևան

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Մեր խորհրդային ազատ յերկրի յերջանիկ, փոքրիկ զավակները յերազում են ամենախիղախ գործերի մասին, իսկ խիղախ գործերը պահանջում են մեծ նպատակներ:

Ռուսական մեծ գրողներից մեկը՝ Անտոն Պավլովիչ Չեխովը, իրավացիորեն նկատում է, վոր մարդու գործը բնորոշվում է նպատակով: Այն գործն է մեծ, վորի նպատակը մեծ է:

Մեր փոքրիկ մանուկներից յուրաքանչյուրը վաղը հնարավորություն ունի դառնալու յերկիր ղեկավարողներից մեկը կամ մեծ գյուտարար, նովատոր, հերոս, մի խոսքով այն ամենը, ինչին նա ձգտում է: Իսկ վորպեսզի յերեխան հասնի դրան, անհրաժեշտ է, վոր մենք նրան հենց սկզբից՝ վաղ մանկության հասակից դաստիարակենք նոր մարդուն բնորոշ հայրենասիրական և բոլոր գեղեցիկ գծերով՝ խիղախությամբ, արիությամբ, հաստատակամությամբ, վճռակնություն, հետևողական սկզբունքայնությամբ, անհատական հասարակական համակցելու կարողությամբ. մի խոսքով՝ բարոյապես կրթված կամքով:

Վերջիվերջո մարդն իր մարդկային վողջ եյուրությունը, իր հոգեկան վողջ կարողություններն արտահայտում և զարգացնում է կամքի միջոցով:

Մարգը դառնում է բնության յերեվույթներէ տերն ու տիրականը, ստիպում է բնությանը ծառայել ժողովու կարիքների լիակատար բավարարմանը՝ կամային գործողութիւնների ժիջոցով:

Կամք ասելով հասկանում ենք գիտակից, խելացի, ծրագրված գործողութիւններ, վորոնց մարգը ձգտում է, ինչ կերպ եւ լինի, իրագործել ու հասնել առաջադրված նպատակին:

Ընկեր Ստալինը Աշխաբադի հերոս կոլտնտեսականներին ուղղած իր վողջույնի մեջ անհղան կամքի ելութիւնը հետեյալ կերպ է բնորոշում.

«Միայն նպատակի պարզութիւնը, միայն նպատակին հասնելու ցածուս համառութիւնը, և բոլոր ու ամեն սեսակի խաչքնդոսները ջարդող ամուր բնավարութիւնը—անուայն հասկութիւնները, վոր դաստիարակում է կոմունիստների կուսակցութիւնը մեր անտանտն հայրենիքի բոլոր ազգերի աշխատավորների մեջ»:

Մեր յերկիրը հերոսների յերկիր է, հերոսութիւնը կազմում է մեր ժողովրդի ամենահիմնական զծերից մեկը: Յեղ մենք հենց այդ վողով եւ դաստիարակում ենք և պետք է շարունակենք դաստիարակել մեր հրաշալի մանուկներին, բայց հիմնականն այն է, վոր դաստիարակութիւն գործը յերբեք չպետք է անջատել ուսուցումից:

Պետք է հասկանալ, վոր խիզախութիւնն ու արեւութիւնը դառնում են ամենակարող, յերբ նրանք միանում են մտածված գործունեյութիւն և գիտելիքների պաշարի հետ: Այդ դաստիարակութիւնը պետք է ակտիւ ամենափոքր հասակից, վորին և նվիրված է մեր աշխարհը:

Փոքրիկ գրքույկը: Նա հիմնականում նպատակ ունի ազնել ծնողներին յերեխաների կոմունիստական դաստիարակութիւն գործում, դաստիարակութիւն, վորը հիմնված լինի Մարքս-Լենինյան աշխարհայայլի վրա:

1. ԿԱՄՔԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԵՐ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՌՈՐՅԱՆ

Մեր յերեխաներն ամենայերջանիկ մանուկներն են: Նրանք չեն իմանում, թե ինչ է սովը, կարիքը, աղքատությունը: Նրանց ընդունակությունները զարգացնելու և բաղմակողմանի գիտելիքներ հաղորդելու համար ստեղծված են և ստեղծվում են բոլոր հնարավորությունները: Նրանք մեր յերկրում շրջապատված են ~~ստալինյան~~ հոգատարությունում ու խնամքով: Խորհրդային Միության հերոսական առօրյան ստեղծում է ամենաբարեհաջող պայմանները Լենինի-Ստալինի մեծ գործին մինչև արյան վերջին կաթիլը նվիրված, աննկուն կամքի տեր, խիզախ, անվեհեր հերոսներ՝ սոցիալիզմի մարտիկներ պատրաստելու համար: ✓

Անհրաժեշտ է, վերապահվե՞լ մենք յերեխաներին ամեն կերպ կապենք այդ առօրյայի հետ, վերսկսե՞նք սեփական հերոսություններով ու արիություններով հագեցված խորհրդային առօրյան, իր հարուստ որինակներով ու հնարավորություններով, ստեղծում է ամենաբարեհաջող պայմաններ կուռ ու յերկաթյա կամքի տեր մարդիկ պատրաստելու համար:

Այս տեսակետից վիթխարի նշանակություն ունի մեր մեծ առաջնորդների և քաղաքացիական պատե-

րազմների ու սոցիալիստական շինարարության հերոսների, ինչպես և մարդկային կուլտուրայի պատմություն խոշորագույն ներկայացուցիչների հերոսական կյանքի հետ յերեխաներին ծանոթացնելը:

Յերեխան ունի մեծ ընդունակություններ, ծաղկող, աճող ուժերի հսկայական պաշար: Չեք գտնի մի յերեխա, վորն իր յերեվակայություն մեջ իրեն անվախ հերոս չպատկերացնի, մոռանալով իր գեռելս թույլ հնարավորությունները, իրեն չպատկերացնի Չապայեվ ու Պապանին: Յերեխան իր խաղով նախապատրաստվում է վաղվա համար: Վաղվա որը, այսօրվա նման, կարիք ունի կենսական եներգիայով լեցուն, նախաձեռնող մարդկանց, ուժեղ պողպատյա բնավորությունների: Լսելով առաջնորդների ու հերոսների կյանքի պատմությունը՝ յերեխան կապրի նրանց գործով ու պայքարով: Յերեխան իր կյանքի համար կստանա կենդանի, համոզիչ, հոյակապ ու վառվռուն որինակներ: Չկա մի յերեխա, վորը չսիրի հրաշալին և ահա այդ հրաշալին նա կստանա գրավիչ ու հետաքրքիր ձևով:

Հիշենք, թե մեր մեծ գրող կոմյսրիտական Ոստրովսկու կյանքի ամենադժվար պայմաններում ինչպիսի նշանակություն ունեցավ իր սիրած գրքերից մեկի՝ «Բոռ»-ի որինակը:

Յերեխան ծանոթանալով հերոսականության բուլբուլ կոդեքսի հետ, կհասկանա, վոր խիզախություն ու արիությունը միայն առանձին, գերբնական մարդկանց հատուկ ընդունակություն չեն, այլ ձեռք են բերվում խելացի համառությամբ ու պայքարի հետևողականությամբ: Նա կհամոզվի, վոր ինքն ել կարող է այդ-

պիսի անվեհեր հերոս լինել, յեթե հետեվի նրանց (հերոսների) որինակին: Հերոսների կյանքի պատմության հետ պետք է ծանոթացնել գեղեցիկ, գրավիչ, հետաքրքիր ձեզմով, խուսափելով վերամբարձությունից: Այսպիսի գրականություն բավականաչափ հրապարակված է մեզ մոտ:

2. ՎՈՐ ԴԵՊՓՈՒՄ Ե ՅԵՐԵԱՆ ՍՈՒՏ ԽՈՍՈՒՄ

Յերեխայի սուտը մեծ մասամբ իր մեջ չի պարունակում այն բոլոր բացասական գծերը, վորը հատուկ է մեծի ստախոսությանը: Յերեխայի յերեվակայությունը շատ վառ է: Ինչպես Գյոթեն և առում, յերեխան իր յերեվակայությամբ հնարավորություն ունի ամեն ինչից ամեն բան ստեղծել: Յերեխայի յերեվակայության հիմքում ընկած է այն առանձնահատկությունը, վոր նա իրականության և յերեվակայության միջև տարբերություն չի դնում: Յերեխան չի սիրում, յերբ իրեն փոքրիկ են համարում: Նա յեւ և ուզում մեծ լինել և կատարել միայն մեծերին հատուկ քաջագործություններ, բայց նա փոքրիկ է, նման արարքների համար վոչ նրա միտքն և հասունացած և վոչ եւ մարմինը. դրա համար եւ նա իր քաջագործությունները տեղափոխում է յերեվակայական աշխարհը և դառնում է ճանապարհորդ, ժարտիկ, հերոս՝ իր խաղերի ու յերազների մեջ: Յերեխան գեղեւ քիչ է ծանոթ իրականությանը, պոստառակեցական մտածւթյունը գեղեւ թույլ է և նրան հետնորավորություն չի տալիս տարբերելու իրականությունը վոչ իրականից, հնարավորը՝ անհնարից: Յերեխայի յերեվակայության լույսն այնքան ուժեղ է, վոր նա

իր յերազներն ընդունում է իբրեւ իրականություն: Դիտեցեք, թե վորքան լուրջ են յերեխաները խաղում, այստեղից եւ պարզ է, թե ինչու հաճախ յերեխաներն իրենց յերեվակայածը հաղորդում են իբրեւ իրականություն: Յերեխան չի ստում, վորովհետեւ նա հավատում է իր ասածին:

Հարցրեք ցանկացած փոքրիկին, թե արդյոք նա ողանալ կարող է վարել: Անպայման դրական պատասխան կստանաք, և նա ձեր հարց ու փորձից վոգեվորվելով կսկսի հորինել, իր հորինածն ընդունելով իբրեւ ճշմարտություն:

Այլ բան է, յերբ յերեխան ստում է զիտավորյալ կերպով, յիշելով վորեւ նպատակից ուղում է խաբել ձեզ: Այս դեպքում մենք զործ ունենք զիտակցված ստի հետ: Գիտակցված այսպիսի պուտը մեծ մասամբ առաջանում է իր արածների մասին ճիշտն ասելու հետեւանքների վախից, — յերեխան ստում է պատժից կամ պատասխանատվությունից խուսափելու համար:

Կան ծնողներ, վորոնք աշխատում են այդպիսի դեպքերում յերեխայի սուտն անպայման բռնել և նույնիսկ սկսում են մի մեծ հարցաքննություն: Չպետք է մոռանալ, վոր հարցաքննության ահը վոչ միայն ստիպում է յերեխային ճշմարիտը չասել, այլև պաշտպանվելու համար զիմել նորանոր ստերի: Դրա համար եւ հարկավոր է հրաժարվել հարցաքննություններից և առհասարակ, ինչ եւ լինի, յերեխայի սուտը շողափելի կերպով ապացուցելու ձգտումից: Միևնույն է, յերեխան կհամառի և ավելի վատ հետեւանք կըստացվի: Դրա համար եւ ավելի լավ է, առանց այս ու

այն կողմն ընկնելու, անմիջականորեն հասկացնել յերեխային, վոր նա ճիշտը չի ասում և այսպիսով ամեն ինչ համարել վերջացած: Իսկ յեթե սուտ ասելը յերեխայի մոտ հաճախ և կրկնվում, ապա հարկավոր է մի կողմից դրա պատճառը պարզել, մյուս կողմից ել՝ մի քանի որ համառորեն, առանց յերեխային չարչարելու, ստուգման յենթարկել նրա ասածները:

Ումնից և յերեխան սովորում սուտ խոսել:

Ինչ խոսք, վոր յերեխան սովորում և ստել, բայց փնից: Թող զարմանալի չթվա, յեթե ասենք, վոր հաճախ հենց իրենցից՝ ծնողներից: Ծնողները, մեծ մասամբ անզիտակցաբար, յերեխային սովորեցնում են ճիշտ չխոսել և այդ վատ սովորույթը մեցնում են յերեխայի մեջ նույնիսկ ամենավաղ հասակից: Որինակ՝ յերեխան կշտացել է, նա այլևս ուտելու ցանկութուն չունի, ծնողները յերեխային ուտեցնելու համար յերբեմն դիմում են հետևյալ միջոցներին՝ կեք, յեթե վոչ, փխիկը կգա կուտի: Յերեխան չափազանց ուզում է տեսնել, թե փխիկն ինչպես պիտի ուտի: Բայց ընտանիքում փխիկ չկա: Մեկ, յերկու և յերեխան հասկանում է, վոր իրեն խաբում են: Կամ, ասենք, հայրը և մայրը պատրաստվում են կինո գնալու: Տան մեջ նախորոք այդ առթիվ յեղել են խոսակցութուններ և ուշիմ յերեխան այդ բանը գիտե, բնականաբար ինքն ել և ցանկանում ծնողների հետ կինո գնալ, բայց նրան խաբում են, վոր իբր թե գնում են բժշկի և նույնիսկ իբր թե յերեխայի համար քաղցրավենիք գնելու: Յերեխան գիտե, վոր ծնողները ճիշտ չեն ասում, բայց մի կերպ համաձայնվում է, մանավանդ լսելով քաղցրավենիք գնելու խոստումը: Ծնողները

մոռանում են իրենց խոստումը, այսինքն կրկնակի գերպով ստելով, յերեխային ակամայից սովորեցնում են ստախոսության:

3. ՅԵՐԵԽԱՅԻ ՇԵՏ ՊԵՏՔ Ե ԼԻՆԵԼ ՇԻՏԱԿ ՅԵՎ ԿԱՏԱՐԵԼ ՆՐԱՆ ՏՎԱԾ ԽՈՍՏՈՒՄԸ

Շիտակությունն ու անկեղծությունը, ճշմարտապիրությունն ու ուղղամտությունը մարդկային վարքի ամենալավ գծերիցն են: Պետք է ամեն կերպ աշխատել զարգացնել շիտակ բնավորություն, վորի համար անհրաժեշտ է չխաբել յերեխային և միշտ նրան ճշմարիտն ասել, կամ նրա հարցերին պատասխանել առանց յերկմտության: Ժիշտ է, լինում են դեպքեր, յերբ ծնողները ստիպված են լինում ճշմարտությունը չասել, որինակ, ասենք թե յերեխան դեղը չի խմում, իսկ անհրաժեշտ է նրան խմեցնել այդ: Յեվ ահա դուք, առանց յերեխային նախազգուշացնելու, գաղտնի կերպով դեղն ածում եք յերեխայի ճաշի կամ թեյի մեջ: Այդպիսի բացառիկ դեպքերում յերեխային յերբեք չպետք է զգացնել, վոր այդ «կեղծիքը» արել եք նրա ոգտի համար:

Յերեխային ավելորդ խոստումներ չպետք է տալ և առհասարակ չպետք է խոստումները շուայել, իսկ յեթե խոստացաք, ապա անպայման պետք է կատարեք, ինչ գնով ել լինի: Յերեխան պետք է սովորի իր խոստումների արժեքը, նրանց չլռայլի և տված խոսքը պետք է կատարի: Դրա համար ել նախքան յերեխային վորեւե բան խոստանալը պետք է անպայման կշռադատել հնարավորության տեսակետից, պետք է հիշել, վոր յերեխան ձեր տված խոստումը յերբեք չի

մոռանում և քանի մոռանում է կատարելու ժամկետը՝ նրա սպասողական զրուծյունը, խոստացած իրն ունենալու կամ զբոսանքի գնալու ձգտումն ախճան ավելի է ուժեղանում: Պարզ է, թե ինչպիսին կլինի յերեխայի հիասթափությունը, յեթե թեթեվամտորեն մոռանաք ձեր խոստումը կամ ասեք ու անցնեք: Յերկրորդ, յերրորդ անգամ նա այլևս չի հավատա ձեզ և ուրիշների վերաբերմամբ ել կվարվի ձեզ նման:

Իսկ յեթե ձեզանից անկախ պատճառով անհրաժեշտ է խոստումը կատարել, ապա խոստացածը պետք է փոխարինել յերեխայի համար համարժեք նշանակություն ունեցող վորևե բանով:

Առհասարակ յերեխան պետք է համոզվի, վոր իր ծնողի այդ-ն՝ այդ յե, վոչ-ը՝ վոչ: Յեթե նա իր ծնողի հաստատակամության մասին համոզվի, ինքն ել նրանից որինակ կվերցնի և առհասարակ իր կամքը կատարել տալու համար չի գիմի զանազան վատ միջոցների, կամակորության և այլն:

Մի որինակ.— Յերեվանի պետկրկեսում վերջերս ակնհասեա յեղա այսպիսի մի դեպք: Հայրը, բավականին կուլտուրական անձնավորություն, իր 6 տարեկան յերեխայի հետ յեկել եր կրկես: Կրկեսում ցուրտ է, իսկ յերեխան բկացավ և ունեցել և միայն վերջերս է հիվանդությունից վեր կացել: Կրկեսում պաղպաղակ են վաճառում, յերեխան պաղպաղակ է ուզում, չնայած վոր նրան պաղպաղակ ուտել չի կարելի: Հայրը մերժում է և բացատրում յերեխային՝ մերժելու պատճառը: Բայց յերեխան շատ լավ գիտի իր հոր «վոչ»-ի արժեքը, նա խռովում է, բղավում է, լաց է լինում և հայրն ել, յենթարկվելով աղային,

գնթինթալով կատարում է նրա կամքը: Պարզ է, թե այդպիսի յերես առած յերեխան ումից է սովորել այդպես վարվել և առհասարակ նրա վրա ծնողներն ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ:

Ծնողների «այո»-ն պետք է «այո» լինի, «վոչ»-ը «վոչ» և այս խնդրում վոչ մի դիջում: Յերեխան պետք է համոզվի այդ բանում:

4. ՅԵՐԵՒԱՅԻ ԿԱՄԱԿՈՐՈՒԹՅՈՒՆԸ (ԿԱՌԻՋԸ)

Հաճախ յերեխաները կամակոր են լինում: Կամակորությունը բավականին տարածված է հատկապես վաղ մանկական հասակի յերեխաների մեջ: Կամակորության հիմքում ընկած է յերեխայի ցանկությունը, վորը մեծերը չեն ուզում բավարարել: Յերեխան իր ազածը կատարել տալու համար դիմում է կամակորության, կապրիվի: Այդպիսի դեպքերում նա կամ խռովում է, ասենք, հրաժարվում է ուտելուց, ընկնում է գետին, մտնում է սեղանի տակ և սկսում է բղավել ու լաց լինել: Հաճախ ել կամակորությունն արտահայտվում է ջղաձգություններով, վոտքերը գետին խփելով և այլն:

Կամակորության պատճառը հետևյալն է: Յերեխան ունի բազմաթիվ պահանջներ, վորոնցից շատերը խիստ իրավացի յեն: Նա փոքր է, թույլ, անզոր, իր աւժերով նա իր պահանջները բավարարել չի կարող, վորոշ դեպքերում ել ծնողները հրաժարվում են բավարարելուց, ուստի յերեխան դիմում է վերջին միջոցին՝ կապրիվին: Որինակ՝ Սյուզիկը կանֆետ է ուզում, մայրը չի տալիս, իսկ խեղճ Սյուզիկի կանֆետ ուտելու ցանկությունը, մոր մերժելու հետեմանքով,

քանի դնում ավելի յե ուժեղանում և իր ցանկացածը կատարելու համար Սյուզիկը դիմում և վերջին միջոցին՝ կապրիդի: Նա մարմնով կախ և ընկնում արժույթ: Ճիշտ և, Սյուզիկն զգում և դրուժյան անհարմարությունը, նա կարող և վայր ընկնել, նրա մարմինը խիստ ցավում և կախված վիճակում, բայց նա շարունակում և կախված մնալ, հաստատ համոզված լինելով, վոր այս միջոցով նա իր կանֆետը կստանա: Կամ մի այլ որինակ՝ ասենք թե հյուրեր ևն յեկել, նստել ևն սեղանի շուրջը, խոսում ևն, ծիծաղում և ուրախանում: Սեղանի մի ծայրի մոտ նստած և Սյուզիկը. նրա վրա վոչ վոր ուշադրություն չի դարձնում: Սյուզիկը ձանձրանում և, նա յե և ուզում խոսակցությանը մասնակցել, իրեն հայտնաբերել, ուժադուքյան կենտրոն դառնալ, բայց մեծերի խոսածն իրեն հասկանալի չի, ինքը վոչնչով իրեն հայտնաբերել չի կարող, դրա համար ել իր սեղանի շուրջը լինելը զգալ տալու համար դիմում և վերջին՝ թույլերին հատուկ միջոցին՝ կամակորությանը: Սյուզիկը սոված և, ուտել և ուզում, բայց նա բղավելով դեն և հրում ամսեն և հրաժարվում և ուտելուց և դրանով իսկ դառնում և հյուրերի ուշադրության կենտրոնը: Նրան խնդրում ևն, համոզում, գրկում, նորանոր ուտելիքներ հրամցնում և այլն:

Այսպիսով, հաճախ մենք ինքներս ենք կամ մեր անուշադրությունն և դառնում յերեխայի կապրիդի պատճառը: Առհասարակ լավ կլինի առաջնորդվել հետևյալ սկզբունքով՝ յեթե յերեխան մի բան և ցանկանում և նրա ցանկության մեջ անհնարին կամ դատապարտելի վոչինչ չկա, պետք և կատարել: Որինակ՝

մեր առաջին որինակի դեպքում վոչինչ չի լինի, յեթե Սյուզիկն առանց կապրիդի ստանալ իր կանֆետը: Առհասարակ ծնողները նախքան յերեխային մեթելը, համառելը, պետք և մտածեն և յեթե հնարավոր և նրա պահանջը բավարարել, պետք և բավարարեն՝ կապրիդի տեղիք չտալու համար: Որինակ՝ հաճախ ակնատես ենք լինում յերեխայի կապրիդի առաջացմանը նրան այս կամ այն հագուստը հագցնելու հետևանքով: Մայրը յերեխային տալիս և, ասենք սեւ գույնի շորը, իսկ յերեխան այսոր սեւը հագնել չի ուզում, այլ, ասենք, ուզում և կապույտը, մոր համար միևնույնն և, թե տղան վորը կհագնի, բայց այնքան, վորքան նա մի անգամ ասել և սեւը, վորոշում և յերեխայի կամքը կոտրել և անպայման սեւը հագցնել: Այստեղից ել՝ յերեխայի կամակորությունը, մոր ջղախությունը, ավելորդ աղմուկը, համառությունը և այլն: Կամակորությունը և կամքը վոչինչ ընդհանուր չունեն, նրանք բեվեռներ են: Կամակորությունը կամքի թուլության, անզորության, անկարողության հետևանք և: Կամակորության մեջ իշխողը ցանկությունն և, վորի բավարարման այլ հնարավորություն չունենալով, թույլ մարդիկ և յերեխաները դիմում են վերջին միջոցին՝ կամակորությանը:

Յեթե յերեխան համոզվի, վոր իր կապրիդը վոչ մի հետևանք չի ունենա, իհարկե նա չի դիմի այդ միջոցին: Դրա համար ել կամակորության դեմ պայքարելու ամենալավ միջոցը նրա կապրիդի վրա բոլորովին ուշադրություն չդարձնելն և: Ասենք թե Ստյոպիկը վորեւ պատճառով խռովեց, հաց չկերավ և

պառկեց հատակին. լավագույն միջոցը նրա վրա բոլորովին ուշադրութեամբ չդարձնելն է: Միևնույն ժամանակ Ստյոպիկը կոշտ հատակին յերեսնիվայր պառկելուց շուտով կհոգնի, նա կվերկենա և սովից ստիպված կմոտենա սեղանին: Յեթե մի անգամ ել սոված մնա՝ վռչիւնչ. դրա փոխարեն Ստյոպիկը իր կապրիզի կատարյալ անփութակարութեան մեջ կհամոզվի և այլևս յերկրորդ, յերրորդ անգամ հատակին չի պառկի:

Շատ լավ ազդում է նաև ծաղրը, որինակ՝ նա յուր ևս ժամացույցին ու ասում,—կեցցես Սյուզիկ, տեսնենք վորքան ժամանակ աթոռից կախված կմնաս, ապա մի քիչ ել, մի քիչ ել— դրանից հետո Սյուզիկը սուս ու փուս վեր ե կենում ու նստում իր տեղը:]

5. ՈՒՄՆԻՑ ԵՆ ՍՈՎՈՐՈՒՄ ՅԵՐԵԽԱՆԵՐԸ ՎԱՏ ԲԱՌԵՐ ԳՈՐԾԱԾԵԼԸ

Յերեխաները վատ բառեր գործածելը յերբեմն սովորում են փոքրից, բայց մեծ մասամբ նրանք սովորում են նաև իրենց ծնողներից՝ մեծերից: Մեծերը յերբեմն առանց հաշվի առնելու յերեխայի ներկայութեանը գործ են անում զանազան անվայելուչ բառեր, «լակոտ», «շան վորդի», «ախմախ», «դմբո» և այլն, առանց հաշվի առնելու, վոր յերեխան լսում է այդ բառերը և հաճախ առանց իմաստը հասկանալու գործածում: Որինակ՝ մի ծնող գանգատվում է իր յերեխայի մոտ այն մասին, վոր իր տղան՝ «շան լակոտը» սովորել է այնպիսի բառեր, վոր միայն լրբերն ու փչացածներն են գործածում, վոր ինքն ել չի իմանում, թե ինչպիսի սրիկա ընկերներին է սովորել այդպիսի կեղտոտ խոսքեր:

Պարզ է, վոր այդպիսի ծնողը չի ել կասկածում, վոր չարիքի արմատը այս դեպքում հենց ինքն է: Յերեխան գործածում է այն բառերը, վոր նա լսել է ամենից առաջ իր ծնողներից:

6. ԻՆՉԱԿԵՍ ԱԵՏՔ Ե ՎԱՐՎԵԼ ՅԵՐԵԽԱՆԵՐԻ ՇԵՏ

Ի՜նչպես պետք է վարվել յերեխայի հետ: Այս հարցը հաճախ ե հուզում ծնողներին: Ի՜նչպես խոսել նրանց հետ, ինչպես պահանջել, կարգադրել, թե՛ խնդրել, վարվել իբրև ընկերով, իբրև հավասարի, թե՛ ամեն կերպ աշխատել ընդդեմ իր հեղինակութեանը:

Այս հարցը յերեխայի դաստիարակութեան համար կարեւոր նշանակութիւն ունեցող հարց է: Փորձենք պատասխանել այս հարցին:

Ամենից առաջ, յերեխայի հետ խոսելիս անպայման հարկավոր է հարգանք ունենալ դեպի յերեխան և վոչ մի կերպ ցույց չտալ, վոր նա անգոր, թույլ եյակ է և ամեն դեպքում կարող է սխալվել: Յերեխայի հետ վերաբերվելիս պետք է հանդես բերել զգուշութեամբ, խոհեմութեամբ և առհասարակ խուսափել նրան վիրավորելուց: Յերեք չի կարելի յերեխային դիմել հետեվյալ խոսքերով՝ «թափթփված», «հիմար», «անշնորհ», «վոչինչ չես հասկանում», «ձեռքից վոչինչ չի գալիս», «դդում» և այլն: Այսպիսի խոսքերով մենք վոչ միայն վիրավորում ենք յերեխայի ինքնասիրութեանը, զգացնել ենք տալիս նրա փոքր լինելը, այլև մտցնում ենք նրա մեջ վախկոտութեամբ, թերահավատութեամբ իր ուժերի նկատմամբ: Չհարգելով յերեխային, մենք դրանով իսկ սովորեցնում ենք նրան չհարգել մեզ: Յեւ իսկապես, ինչպէս են ուրախանում

20272-59



այդպիսի ծնողները, յերեխաները, յերբ հայրը կամ մայրը իրենք վորեւիցե անշնորհք քայլ են անում: Յերեխաները սիրում են նրանց, ովքեր հարգանքով, մարդավարի վերաբերմունք են ունենում դեպի իրենց: «Յես սիրեցի իմ մորաքրոջը նրա համար,—գրում է յերեխաներից մեկն իր որագրում,—վոր նա առաջինը պիտեց մարդավարի կերպով վարվել և խոսել ինձ հետ այնպես, ինչպես մարդիկ են իրար հետ խոսում»:

Վարվել յերեխայի հետ հարգանքով, այդ չի նշանակում ջնջել ամեն տարբերութիւն մեծի և փոքրի միջև և ստեղծել կատարյալ հավասար ընկերակցութիւն: Վորոշ ծնողներ ցանկանալով յերեխաներին ավելի մոտեցնել իրենց, աշխատում են վոչ մի կերպ ցույց չտալ, վոր իրենք ծնողներ են, և նույնիսկ բանն ախտեղ է հասնում, վոր պահանջում են, վորպեսզի յերեխան փոխանակ հայրիկ և մայրիկ ասելու, ուղղակի կոչի ծնողներին իրենց անուններով: Պարզ է, վոր քոլոր նման դեպքերում ծնողների հեղինակութիւնը, նրանց որինակելի լինելը, նրանց լսելը և այլն անհետանում են և նրանց դեկավար դաստիարակչական դերը հավասարվում է 0-ի: Հայտնի գրող-մանկավարժ Մակարենկոն այդպիսի ծնողների դաստիարակչական գերը պարզելու համար բերում է հետեւյալ որինակը:

11 տարեկան յերեխան իր հոր հետ խոսելիս ասում է՝ «Սերյոժա հիմարութիւններ ես դուրս տալիս»:

Տե՛կնաբանություն

Ինչպես ասում են՝ կոմենտարիաններն ավելորդ են: Ծնողը յերեխայի դաստիարակիչն է, նրա ավագ

խորհրդատուն: Իսկ դրա համար հարկավոր է, վոր յերեխան հարգի իր ծնողներին և ամենից առաջ համոզվի, վոր նրանք միշտ ճշմարիտ են, խելացի, իմաստուն և շատ են սիրում իրենց յերեխաներին: Դրա համար ել պետք է հասկանալ յերեխայի տրամադրութիւնը, հնարավոր դեպքում հարգել և կատարել նրա ցանկութիւնները, գուրգուրել և միաժամանակ հարկ յեղած դեպքում հանդես բերել արդար խստաւրտութիւն: Վոչինչ ավելի չի վերավորում յերեխային և առաջացնում նրա մեջ կասկած իր ծնողների արդարամտութիւն ու խոհեմութիւն մասին, վորքան անարդարացի վերաբերմունքը յերեխայի հանդեպ: Որինակ՝ յերեխան ծաղիկներ է հավաքել և ուզում է նվերել իր սիրելի մորը, ուրախացնել նրան, նա ուրախ ուրախ ներս է մտնում և ուզում է ծաղիկները պարզել իր մորը, յերբ հանկարծ մոր գոռոցը լսելիս («Ինչպե՞ս ես այդ աղբը հավաքել ներս բերել, եղ ի՞նչ տեսակ աղջիկ ես, հաղիվ եմ սենյակը մաքրել, դու ուզում ես նորից կեղտոտել, իմ աշխատանքը չես գնահատում») խեղճ աղջկա սերը, հարգանքը, ուրախութիւնը մոր հանդեպ միանգամից փոխվում է հիասթափութիւն ու ատելութիւն և նա զայրույթից սկսում է լաց լինել:

Կրկնում ենք, յեթե ուզում եք, վոր յերեխաները ձեզ լսեն, վարվե՛ք նրանց հետ իրրե մարդու, հասկացե՛ք նրանց, հարգե՛ք նրանց անհատականութիւնը, մի վերավորե՛ք նրանց, մի գզացնել տվե՛ք, վոր նրանք փոքրիկներ են, հետեաբար և «անշնորհք են», «տգետ», «վոչինչ չհասկացող»: Յերեխայից վորեւէ բան պահանջելիս կամ կարգադրելիս, պետք է աշխատել լինել զուսպ, ձայնը չբարձրացնել և միաժամանակ

այնպես կարգադրել, վոր յերեխան չկատարելու վոչ մի հնարավորութիւն չունենա: Որինակ՝ չի կարելի յերեխային ասել. «Արտո ջան, ինչ կլինի մի բաժակ ջուր տաս», կամ «շորերդ հագի ելի վորդիս», այլ վորոշակի, վոչ մի առարկութիւն չպահանջող տոնով պետք ե ասել «Լյովա, ջուր տուր հայրիկին», «Ինչքան ես դանդաղում, անմիջապէս հագիր շորերդ»:

Բայց, պահանջկոտ լինել յերեխայի հետ, դա չի նշանակում քարսիրտ լինել ու յերեխայի հետ միշտ հրամայական տոնով խոսել: Յերեխան պետք ե հասկանա, վոր իր ծնողները սիրում են իրեն և իր լավին ուղղում: Յերեխան պետք ե հատուկ մտերմութիւն զգա իր ծնողների հանդեպ: Բոլոր մանուկներն ել սիրում են, յերբ ծնողները գրկում են իրենց, գուրգուրում, առհասարակ պետք ե ծնողները վոչ միայն կարգադրողի դերում լինեն, այլև սիրողի ու հարգողի, նրանք պետք ե յերեխայի հետ վորոշ դեպքերում լինեն «յերեխա», խաղ անեն, ծիծաղեն և ուրախանան: Մաքբեր, Լեմիւնը միշտ սիրել են յերեխաներին և մեծ հաճույքով յեղել մանուկներին մեջ: Հայտնի յե ~~Մեծ Ստալինի~~ քնքուշ ու հոգատար սերն ու փայփայած յերեխաների հանդեպ:

7. ՅԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ՊԵՏՔ Ե ԼԻՆԵԼ ՈՒՐԱԽ

Հայրը և մայրը զանգատվում են, վոր փոքրիկ Ռուդոլֆը բոլորովին չի սիրում տանը նստել, վոր ամբողջ ուրը բակում վազվղում ե, գնում ե դռնապահի մոտ, հնոցապանի մոտ, հավաքաբարի մոտ, մի խոսքով յերեխան ընկերակցում ե բոլորի հետ՝ բացի ծնողներից: Ինչո՞ւ: Վորովհետև հենց վոր փոքրիկ Ռուդոլֆը

Քը ներս ե մտնում շեմքից, սկսվում ե հարձակումը նրա վրա՝ «վճռեղ եյիր, հւմ հետ եյիր քարշ գալիս», քիթ մուռթդ եդ Խնչ ուրի յես գցել, Լի կոշիկներդ կեղտոտել ես, քանի անգամ ասել եմ մաքուր պահես, այս Խնչ տեսակի յերեխա յես» և այլն: Յեվ այսպես շարունակ, հենց վոր խեղճ Ռուդոլֆը վոտը տանից ներս ե գցում, նրա վրա սկսվում ե հարձակում, գուրգուրոց, խրատներ և այլն: Պարզ ե, նման պայմաններում Ռուդոլֆը կգերադասի ում հետ ասես լինել, բացի իր ծնողներից:

Պետք ե միշտ հիշել, վոր յերեխայի բնավորութեան հիմնական գծերից մեկն ել լավատեսութիւնն ե: Յերեխան սիրում ե ուրախ լինել, իր ժամանակն աշխուժ կերպով անցկացնել: Նա տխուր, կնճռոտ, «ամպամած» դեմքեր չի սիրում: Յերջանիկ ե նրա մանկութիւնը, վառ ե նրա ապագան: Յերեխան չի սիրում վոչ միայն տխուր մարդկանց, այլև տխուր հեքիաթներ, կինո նկարներ, ներկայացումներ և այլն:

Թե վորքան ուժեղ ե յերեխաների մեջ լավատեսութիւնը՝ բերենք հայտնի մանկական գրող Զուկովսկու մի հրաշալի որինակը: Փոքրիկ աղջիկը չափազանց լրջորեն դիմում ե իր մայրիկին:

— Մայրիկ, բոլորս ել հարեվանուհու աղջկա նման պետք ե մեռնենք:

— Այո, բալիկս, բոլորս ել վերջիվերջո պետք ե մեռնենք:

— Դու յել, մայրիկ, պետք ե մեռնես, հայրիկն ել, յիս ել:

— Այո, բալիկս:

Յերեխան մի պահ տխրում ե, կնճռոտում ե դեմքը:

և հանկարծ դիմում ե մայրիկին. «մայրիկ ջան, յեթե բոլորը մեռնեն, ել ռվ պետք ե թաղի նրանց, վերջի-վերջո մեկը պետք ե լինի. թող այդ մեկը յես լինեմ»

Այսպիսով, փոքրիկ աղջկա լավատես միտքն այստեղ ել յեկք գտավ. նա «լուծեց» մահվան և կյանքի կարևոր և անլուծելի խնդիրը:

8. ՄԻԱՅՆԱԿ ՅԵՐԵԽԱՅԻ ՀԱՐՑԸ

Դաստիարակության ամենակարևոր խնդիրներից մեկը միայնակ (միևուճար) յերեխայի հարցն ե: Ծնողներն ուզեն չուզեն, բառիս լայն իմաստով պետք ե դողան իրենց յերեխայի վրա և սարսափելով նրան կորցնելու ահից, յերեխային շրջապատեն ավելորդ ու ձանձրացուցիչ գուրգուրանքով, խնամքով ու հոգատարությամբ: Յերեխին յերեխային կորցնելու սարսափն այնքան ուժեղ ե լինում, վոր նույնիսկ ամեն քայլափոխում հետեւում են նրան, փաթաթում, բարուրում, չեն թողնում, վորպեսզի նա դուրս գա բակը, փողոց, խաղա, վազվզի իր ընկերների հետ:

Յերեխան աճում ե մենակ և նրա հետ միասին աճում են նաև յեսասիրության ամենավատ գծերը: Միայնակությունն առաջացնում ե յերեխայի մեջ քաշվածություն, անհամարձակություն, վախկոտություն, վայրենություն (վորոշ առումով) և դատարկ յերազկոտություն: Շարունակ շրջապատված լինելով մեծահասակներով, միշտ լինելով մեծերի շրջանում, յերեխան յուր տարիքից շատ ավելի շուտ ե զարգանում: Նրա զգացմունքները, խելքը բոլորովին յերեխայական չեն. «նրանք վաղ են հասունանում մտքով և հույզերով, վորպեսզի յերբեք լրիվ չհասունանան: Նրանք

ժամանակից շուտ կորցնում են մանկական համարյա վողջ հատկությունները, վորպեսզի իրենց վողջ կյանքի ընթացքում մնան մանուկներ» (Գեբցեն):

Թե այդպիսի դաստիարակության յենթարկված յերեխան ինչպիսի հակակրեւի յեսասիրական բնավորություն կարող ե ունենալ, ապացուցենք մի որինակով, վորը վերցված ե Մակարենկոյի «Յորհուրդներ ծնողներին» հետաքրքիր աշխատասիրությունից:

Հայրը և մայրը յերկուսն ել ինտելիգենտ մարդիկ են, ունեցել են մի տղա: Մայրն ուզում ե ունենալ նաև յերկրորդը, բայց ամուսինները խորհրդակցելով վորոշում են բավականանալ մեկով, վորպեսզի նրանք իրենց յերեխային կարողանան դարձնել մեր յերկրին: արժանի իսկական անձնավորություն: Բնականաբար, ծնողները, նույնիսկ անկախ իրենց ցանկությունից, այնպիսի սիրով ու գուրգուրանքով են շրջապատում այդ տղային, վոր նա փաստորեն դառնում ե ծնողների պաշտամունքի առարկան: Յերեխան խիստ ընդունակ ե լինում և այս բանն ավելի յե ուժեղացնում ծնողների սերն ու գովասանքը յերեխայի հանդեպ: Այդպիսով, նման պայմաններում մեծացած յերեխայի մեջ վոչ միայն առաջանում ե թուլամորթություն, այլև ամենամեծ կարծիքն իր մասին: Յերեխան ընդունվում ե դպրոց, սովորում ե փայլուն կերպով: Դպրոցում բոլորը նրան գովում են, նույնիսկ այդ տղայի արտակարգ ընդունակությունների մասին տեղական թերթում տպվում ե գովասանքներով լեցուն մի հոդված: Ծնողները տեսնելով, վոր իրենց հույսերն արդարանում են, ել ավելի յեն յերկրպագում յերեխային: Դրությունն այն աստիճանի յե հասնում, վոր հայրն

իր առանձնասեյակն ամբողջովին տալիս ե տղային: Յերբ տղան տանն ե լինում, ծնողներն աշխատում են թաթերի վրա ման գալ, վոչ մի կերպ չխանգարել յերեխային: Յերեխան փայլուն կերպով ե ժամանակից շատ շուտ ավարտում ե միջնակարգ դպրոցը ե իր արտակարգ ընդունակությունների շնորհիվ, ու դպրոցի գերեկտորի հատուկ միջնորդությամբ ընդունվում ե բարձրագույն դպրոց, վորտեղ նորից փայլում ե իր ընդունակություններով:

Վերոհիշյալ ընդունակությունների հետ միասին, դաստիարակության այդպիսի ձևը յերեխայի մեջ հետզհետե առաջացնում ե ընավորության ամենավատ գծեր. նա վոչ միայն չի հարգում իր ծնողներին, չի գնահատում իր հանդեպ ունեցած սերն ու հոգատարությունը, այլե այդ ամենն ընդունում ե իբրեւ ինքնաշարժիչ հասկանալի, սովորական տիպի խնամք, վորը տրվում ե «ըստ արժանույն», վոր ուրիշ կերպ ել լինել չի կարող:

Տղան շուտով սկսում ե վոգելից ըմպելիքներ գործածել, դիշերներն ուշ վերադառնալ, նրա վրայից սկսում ե բուրել դուխիների բավականին կասկածելի հոտ:

Մեռնում ե այդ տղայի դասընկերներից մեկը, տղան վոչ միայն թաղմանը չի մասնակցում, այլե չի ել վշտանում: Յերբ հայրը փորձ ե անում տղայի վարքի մասին մի փոքր վախկոտ դիտողություն անել, տղան միայն արհամարհանքով ուսերն ե շարժում ե ավելացնում՝ «գու ինչ ես հասկանում վոր, հայրիկ»: Տղայի ընավորությունն այն ասեփձան զգվելի ու յեսասեր ե դառնում, վոր նույնիսկ հրաժարվում ե

գնալ դեղատուն ե բժշկի պատվիրած խիստ շտապ դեղը բերել այն ժամանակ, յերբ հայրը ծանր ջղաձգություններ եր ունեցել ե հարկավոր եր անմիջապես ողնություն. նա պատճառաբանում ե՝ «ժամադրը ված եմ, ուշանում եմ, չեմ կարող»: Տղան ունքն անգամ չի շարժում այն ժամանակ, յերբ ծեր պրոֆեսոր բժիշկն ինքն ե վերցնում վերարկուն ե վազում դեղատուն:

Այս որինակը, վոր վերցված ե մեր իրականությունից, խիստ հազվադեպ ե, բայց մտածելու շատ բան կա այն ծնողներին, վորոնք ուզում են սահմանափակվել մեկ յերեխայով:

9. ՏՂԱՅԻ ՅԵՎ ԱՂԶԱ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Որինակելի դաստիարակչական պայմաններ են ստեղծվում այն դեպքում, յերբ միևնույն ընտանիքում կան ե՝ տղաներ ե՝ աղջիկներ: Մանկավարժությունն արդեն վաղուց ե, վոր պարզել ե յերկսեռ դաստիարակության հսկայական նշանակությունը յերեխաների ընավորության կազմակերպման գործում: Յերկսեռ դաստիարակությունը զարգացնում ե յերեխաների մեջ համարձակություն, արիություն, տոկունություն, ստիպում ե յերեխաներին հետեւել իրենց արտաքինին, լինել քաղաքավարի ու կիրթ իրենց շարժումների մեջ, խույս տալ կոպտությունից ե վատ բառեր գործածելուց, առաջացնում ե տղաների ե աղջիկների մեջ փոխադարձ հարգանք, իսկական ընկերական կապ՝ վածություն, ընդհանուր ցանկություններ ու գաղափարներ ե այլն:

Բայց այդ բոլորը հնարավոր ե միայն այն դեպք-

քում, յեթե մենք մեր վերաբերմունքով յերեխաների հանդեպ, մեր դաստիարակչական աշխատանքներում վոչ մի տարբերութիւն չդնենք տղայի և աղջկա միջև: Յերբեմն իրենք՝ ծնողներն ընտանիքում արհեստական տարբերութիւն են մտցնում յերկու սեռի յերեխաների մեջ և այսպիսով ստեղծում են արհեստական հակադրութիւն՝ տղայի և աղջկա միջև: Որինակ՝ չի կարելի աղջիկ յերեխաներին տալ նույն տիպի խաղալիքներ, ինչ տղաներին: Ճիշտ է, յերբ ծնողներն աղջիկների համար գնում են միայն տիկնիկ, պահարան և ճաշ յեփեղու պարագաներ, իսկ տղային՝ հրացան, ավտո, զանազան կառուցող գործիքներ և այլն: Խաղալիքները պետք է նույնանման լինեն և՛ տղաների և՛ աղջիկների համար:

Յերեխաներին վորոշ հանձնարարութիւններ անելիս, և առհասարակ տնային աշխատանքներում, վոչ մի տարբերութիւն չպետք է դնել յերկու սեռերի միջև: Որինակ՝ չպետք է ասել «Ելա մի այս կոճակը կարիր, դու աղջիկ ես, իսկ դո՛ւ, Ալլիկ վազիր մի քիչ Զուր բեր, կամ այս մեխը խփիր. դա տղայի գործ է»: Յե՛վ Ալլիկը և՛ Ելլան յերկուսն ելհաժաօսար մասնակցութիւն պետք է ունենան տնային աշխատանքներում՝ առանց սեռի ամենափոքր խտրութիւն:

Պետք է աշխատել, վոր յերեխայի ընկերները լինեն և՛ տղաներ և՛ աղջիկներ, և յերբ տղան և աղջիկն իրար հետ են խիստ մտերմանում, նրանց չպետք է ծաղրել, ինչ վոր խորհրդավոր ակնարկներ անել, և այլն: Պետք է հասկանալ, վոր այստեղ ֆիզիոլոգիական վոչինչ չկա և չի ել կարող լինել: Սա շատ մաքուր մանկական ընկերութիւն է: Ընդհակառակը՝ մեր

«ձեռ առնելով», «խորհրդավոր ակնարկներով» յերեխաների մաքուր սերո մեջ ինչ վոր խիստ անցանկալի բան ենք մտցնում, զգացմունքային տարր, իսկ վոր խիստ կարելի է, նրանց մեջ ստեղծում ենք, կարծեք թե ընդգծում ենք յերկու սեռերի տարբերութիւնը, վորի մասին յերեխաները շատ քիչ բան գիտեն:

10. ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Յերեխայի կամքի և առհասարակ վարքի կազմակերպման ասպարիզում խոշոր նշանակութիւն ունի սեռական դաստիարակութիւնը: Մեծ է նաև սեռական դաստիարակութեան դերը յերեխայի որգանիզմի նորմալ և կանոնավոր զարգացման գործում: Հայտնի է, վոր վորոշ դեպքերում յերեխայի վարքի մեջ նկատվող խոշոր փոփոխութիւններ՝ ջղայնութիւն, ինքնամփոփութիւն, անզսպութիւն, շուտ բռնկվելը, ցինիկութիւնը և այլն, կարող են իրենց հիմքում իբրև պատճառ ունենալ սեռական կրքերի ժամանակից շուտ և հիվանդագին զարգացումը:

Կան գիտնականներ, վորոնք այնքան հեռու չեն գնում, վոր նույնիսկ յերեխայի բնավորութեան բոլոր դժերի կազմակերպվածութիւնն ամբողջովին բացատրում են սեռական որենքներով: Որինակ՝ Ավստրիացի հայտնի հոգեբու Ֆրեյդը գտնում է սեռական զգացմունքն ամենավաղ հասակում անգամ, և ընդգծում է այդ զգացմունքի վառելի դերը նույնիսկ փոքրիկ մանուկների համար:

Գիտութեան վերջին տվյալները՝ յերեխաների մեջ սեռական զգացմունքի առկայութեան մասին, հերքում են Ֆրեյդի վոչ ճիշտ տեսակետը: Մանկա-

կան հասակն անսեռ հասակ ե կնորմալ յերեխան մինչև սեռական հասունացման (արբունքի) շրջանն անցնելը, սեռական բնույթի վոչ մի զգացմունք չունի: Խնարկե, յերկու սեռերի տարբերությունների մասին նա բավականաչափ բան գիտե, բայց նրա մոտ սեռական զգացմունք, պահանջ համարյա թե չկա:

դառնում ե մոայլ, սկսում ե ատել և արհամարհել իր ծնողներին և այլն:

Ինչպես վերևում արդեն ասացինք, յերեխայի
սեռական վաղաժամ զարգացմանը նպաստում են

Ֆնոդները կողմից նրա հանդեպ ցուցաբերվող ավելորդ գուրգուրանքները, համբույրները, վորոնք յերբեմն ել կրքոտ բնույթի յեն լինում, որինակ, նրանց վերցնում են իրենց անկողինը և նույնիսկ միասին քնում, ամուսիններն իրենց յերեխաների հետ բաղնիք են գնում և այլն: Այստեղ պետք է շեշտել, վոր յերեխայի մարմնի վորոշ մասերը (հատկապես շրթունքները, կուրծքը և սեռական օրգանները) կարող են շուտ գորգավել, յեթե մեծերը շարունակ գրկում են, համբուրում, սիրում և այլն:

Ուրեմն միանգամայն հասկանալի յե, վոր յերեխաներին և վոչ մի դեպքում միևնույն անկողնում չպետք է պառկեցնել:

Յերեխայի անկողինն իր մեջ հեշտագին վոչինչ չպետք է ունենա, նա պետք է լինի վորքան հնարավոր է չոր: Պետք է խուսափել յերեխային այնպիսի գրգռիչ ուտելիքներ տալուց, ինչպիսին են կծու, թրթուն, աղին կամ վոգելից խմիչքները: Յերեխան յերեկոյան պետք է քիչ ուտի և առհասարակ պետք է աշխատել, վոր նա ծանրացուցիչ վոչինչ չուտի: Հանգիստը ունը հնարավորություն չի տալիս յերեխային ժամերով թավալվել փափուկ անկողնում և վոր գլխավորն է՝ ուշադրություն դարձնել իրենից մեծերի վրա: Կրկնում ենք, վոգելից խմիչքներ յերեխային վոչ մի դեպքում չպետք է տալ, բացի օրգանիզմի համար վնասակար լինելուց, վոգելից խմիչքները խիստ աղեցուցիչ յունեն սեռական վաղաժամ հասունացման տեսակետից:

Պետք է ամեն կերպ աշխատել, վորպեսզի յերեխան խաղով, դասերով և այլ աշխատանքներով վրադարձ

ված լինի և այդպիսով հնարավորություն չունենա իր ուշադրությունը վոչ ցանկալի խնդիրներով զբաղեցնել: Յերեխան պետք է քիչ լինի մեծերի շրջանում: Մեծերը պետք է յերեխայի մոտ իրենց պահեն չափազանց չափաված և զուսպ, աշխատեն խուսափել սեռական գրգռ առաջացնող կամ անտեղի հետաքրքրություն հարուցող խոսակցություններից: Յերկսեռ դաստիարակությունը՝ յերկու սեռի յերեխաների մեջ տարբերություն չգնելը մեծ չափով ոգտակար է նաև այս տեսակետից:

Ինչպես տեսանք, այս խնդրում պետք է յերեխային դաստիարակել այնպես, վորպեսզի այդ սեռական ղգացմունքը վաղաժամ չհասունանա, այլ դարձանա և հայտնաբերի իրեն նորմալ կերպով՝ համապատասխան նրա տարիքային առանձնահատկություններին:

11. ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Սովորաբար յուրաքանչյուր անծանոթ գործողություն պահանջում է ուժերի և եներգիայի բավական մեծ լարում: Յերը մենք նույնանման գործողությունները կատարում ենք մի շարք անգամ, առաջանում և ունակություն կամ սովորություն. վորեից շարժման բազմիցս կրկնությունը թեթևացնում և հեշտացնում է օրգանիզմի աշխատանքն այնքան, վոր հետզհետե այդ գործողությունը կարող է կատարվել առանց ուժերի և գիտակցության լարման, այլ ամենահեշտ ավտոմատ ճանապարհով: Հիշենք, թե վորքան դժվար է առաջին անգամ հեծանիվ նըստելիս հավասարակշռություն պահելը: Մարդն այդ դեպքում լարում է իր ուշադրությունը, հավաքա-

գորում յուր մտավոր ու մկանային վողջ եներգիան, հետզհետե, մի շարք վարժությունների դեպքում մարդը կարողանում է ավելի քիչ եներգիա գործադրելով հասնել ավելի լավ արդյունքի, մինչև վոր հեծանիվ նըստելը դառնում է սովորութ, վորը կատարվում է առանց ուժերի ամենաչնչին լարման անգամ՝ ավտոմատ կերպով:

Այսպիսով ունակություններն առաջանում են կրկնությունների և վարժությունների հետեվանքով, կատարվում են ուժերի և կարողությունների մեծ խնայողություն՝ նոր ավելի բարդ խնդիրներ լուծելու համար:

Սովորութներ, ունակություններ դերն այնքան մեծ է, վոր ամրապնդվելով ուղեղում, մըտնում է մարդու բնավորության մեջ իբրև խոշոր նշանակություն ունեցող մի գործոն: Իզուր չեն ասում, վոր «սովորութը յերկրորդ բնավորությունն է»: Հոգեբան Ջեմսը մի քիչ չափազանցության մեջ մտնելով նկատում է, վոր մարդկային հազար գործողություններից 999-ը ունակություններն են կազմում:

Ունակությունների մշակման, առաջացման ամենամեծ տոկոսն ընկնում է մանկական հասակի վրա: Մանկական հասակում ձեռք բերած բազմաթիվ ունակություններ մենք պահպանում ենք մինչև մեր կյանքի վերջը: Տոլստոյը գտնում է, վոր վաղ մանկական հասակում մենք շատ ավելի բան ենք սովորում (ունակությունների մշակման իմաստով), քան հետագա մեր ամբողջ կյանքի ընթացքում: Յեվ իսկապես, նորածին յերեխան բացի մի շարք վոչ զարգացած բնադգորեն, ժառանգականորեն կատարվող շարժումներից

աւերիշ վոչինչ չունի: Նորածին յերեխան ծծում է, զգում է ցավ, վախից կծկվում է, հազում, փռշտում է և այլն, բայց յերեխան այդ բնադդային շարժումներով շատ հեռու գնալ չի կարող: Փաստորեն նա մի անգոր եյակ է: Նա սկզբնական շրջանում իր բոլոր աւնակությունները ձեռք է բերում վարժությունների շնորհիւ: Վարժությունների միջոցով յերեխան սովորում է կատարել մկանների բարդ շարժումներ, ճանաչել ծանոթ իրը, քայլել, խոսել, հագնվել, լվացվել և այլն: Այս բոլորից պարզ է, թե ինչպիսի կարելոր նշանակություն ունի հենց ամենափոքր հասակից յերեխայի մեջ նպատակահարմար, խելացի ունակություններ մտցնելը: Յուրաքանչյուր դաստիարակություն սկսվում է ունակությունների մշակմամբ:

Լավ ունակությունների մշակումը պահանջում է վորոշակիություն, մշտականություն, հետեվողականություն և համառություն: Որինակ՝ վերցնենք մաքրասիրությունը: Յերբ յերեխան ամեն ուր լվացվում է, կարում է յեղունգները, հարկ յեղած դեպքում փռում է շորերը կամ նստում է գարշոկին (տնայւման պահանջելով, վորպեսզի յերեխան իր անկողնում կամ հատակին չկեղտոտի), դրանով նա սովորում է մաքուր լինել:

Մենք յերբեմն ականատես ենք լինում հետեվյալին: Առավոտյան յերեխան արթնանալիս յերկար ժամանակ թաւալվում է անկողնում, առանց հագնվելու ման է գալիս և ծնողներին բավականին ջղայնացնելուց հետո միայն (պատահում են նույնիսկ ծեծի դեպքեր) սկսում է հագնվել: Պատճառն այն է, վոր մենք նրան հենց սկզբից չենք սովորեցրել արթնանա-

լուն պես վեր կենալ, վեր կենալուն պես հազնվել
կամ վերցնենք թափթփվածությունը, վորը հատուկ
և շատ յերեխաների: Յերեխան խաղում է իր խա-
ղալիքներով, իսկ հետո դես ու դեն է նետում դրանց,
կեղտոտում սենյակը ու այդպես ել թողնում և գրա-
նով մեծերի համար ջղախանալու և լրացուցիչ աշխա-
տանքի պատճառ դառնում:

Վերցնենք, որինակ, յերեխաների հագուստի կա-
նոնավոր ու մի տեղ հավաքելու խնդիրը: Յերեխա-
ներից միմանք հանվելուց հետո իրենց հագուստները
վոչ միայն չեն դասավորում կանոնավոր կերպով, այլև
դես ու դեն են շարտում, իսկ առավոտյան մայրե-
ռու յերեխան ահազին ժամանակ և եներգիտ յեն կորց-
նում թափթփված շորերն այս ու այն տեղից՝ սեղա-
նի կամ մահճակալի տակից հանելու համար:

Յերեխային հենց սկզբից պետք է սովորեցնել
մաքրասիրության, կարգ ու կանոնի: Այդ աշխա-
տանքը վոչ միայն պետք է կատարել անձնական որի-
նակով, այլև համառ ու հետևողականորեն յերեխա-
յի մեջ համապատասխան կուլտուրական ունակու-
թյուններ մշակելով: Պետք է չմոռանալ և այն, վոր
վորոշ ունակություններ կարող են մոռացվել, յեթե
սկզբնական շրջանում նրանց մշակման ու ամրապնդ-
ման վրա հատուկ ուշադրություն չդարձնենք: Յերեք
չպետք է բավականանալ միայն նրանով, վոր յերե-
խաներն արդեն ունեն վորոշ ունակություններ, այլ
անհրաժեշտ է, վոր ամենուրեք համառ աշխատանքի
միջոցով սովորույթը դառնա բնավորություն: Միա-
ժամանակ պետք է պայքարել վատ ունակություննե-
րի առաջացման դեմ, ինչպիսին է, որինակ, եգոիզմը,

իր գործողությունների անպատասխանատվությունը,
անպատասխանատվության զգացմունքը ուրիշների
հանդեպ և այլն: Յերեման մենք յերեխայի մեջ անդի-
տակցաբար մշակում ենք վատ, անդուրեկան ունակու-
թյուններ, որինակ՝ փոքրիկը կեղտոտում է իր անկո-
ղինը, յերբ բարկանում էս յերեխայի վրա, սկսում է
լաց լինել: Սովորաբար նման դեպքերում ծնողները
յերեխայի «խաթրը առնելու» համար աշխատում են
պատասխանատվությունը ձգել վորեիցե մի այլ կեն-
դանու կամ ուշյակ ուղղակի յերեխայի մեծ յեղ-
բայրների կամ քույրերի վրա: Որինակ, այդպիսի դեպ-
քում լսում ենք յերեխային «մխիթարող» մոր հետե-
յալ խոսքերը. «փխիկն է կեղտոտել իմ բալայի ան-
կողինը, ան դու փխիկ»: Ստացվում է այն, վոր մենք
դրանով վոչ միայն յերեխային չենք սովորեցնում
մաքրասիրություն, այլև նրա մեջ առաջացնում ենք
անպատասխանատվության զգացմունք իր գործողու-
թյունների հանդեպ, իսկ վոր ամենազլխավորն է, նրա՝
յերեխայի մեջ առաջացնում ենք ինքնապահովագ-
րում և իր մեղքերն ուրիշի վրա գցելու հակասոցիա-
լական ունակություն. կամ մի այլ որինակ: Յերե-
խան անզգուշորեն վազեց, վայր ընկավ և սկսեց լաց
լինել: Նման դեպքերումն ել վորոշ ծնողներ յերե-
խային հանգստացնելու կամ իրենց մեղքը ուրիշների
վրա գցելու համար դիմում են մի շատ «փորձված»
միջոցի: Նրանք, ծնողները, ծեծում են աթոռ, վորին
կտավ յերեխան, ծեծում են հատակը, վորի վրա ըն-
կավ յերեխան և այսպիսով յերեխային ներշնչում
են այն միտքը, վոր իր արարքների և անզգուշու-
թյան համար ուրիշներն են պատասխանատու:

12. ՅԵՐԵՒԱՅԻ ՄԵԶ ՊԵՏՔ Ե ԶԱՐԳԱՑՆԵԼ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ

Յերեխան արդեն 7-8 ամսական հասակից հանդես ե բերում ինքնուրույնության ձգտումները: Որինակ՝ յերեխան աշխատում է վերցնել գդալը և առանց մոր ոգնության ուտել, կամ ասենք թե մի քանի ամիս ավելի ուշ՝ ինքնուրույն կերպով հանել գուլպաները կամ կոշիկները:

Իհարկե, յերեխան միանգամից այդ բանն անել չեր կարող և ուրիշի ոգնության կարիք է զգում: Այդպիսի դեպքերում մենք ոգնելով յերեխային, չպետք է խանգարենք նրա ինքնուրույնությանը: Որինակ՝ ասենք թե յերեխան ինքն է ուզում իր ձեռքով բռնել գդալը և մածուն ուտել: Իհարկե սկզբում վոչինչ դուրս չի գալիս, նա նույնիսկ գդալն ուղիղ բռնել չի իմանում, բայց նա թող մի ձեռքով խառնի մածունը և բռնի գդալը, իսկ դուք շարունակեք նրան կերակրել: Մեկ ու կես տարեկան յերեխան արդեն «ոգնում է» իր մորը, նա հատակն է «ավլում» իրենից յերկու անգամ մեծ ավելով, «ոժանդակում է» մամային լվացք անելիս, բերում է հայրիկի կոշիկները, վերցնում է հատակի վրա ընկած իրերը և այլն:

Այսպիսի դեպքերում վոչ միայն չպետք է ծաղրել յերեխային ու բարկանալ նրա վրա, խլել նրա ձեռքից իրը և այլն, այլ ընդհակառակը ամեն կերպ պետք է խրախուսել ինքնուրույն շարժման ամեն մի արտահայտություն: Իհարկե բանը յերեխայի «ոգնությունը» չէ, նրա «ոժանդակությունը» շատ դեպքերում նույնիսկ խանգարում է մեծերին, բայց դրա փոխարեն նա ձեռք է բերում այնպիսի անգնահատելի

հատկություններ, ինչպես ինքնուրույն աշխատանքի ունակություններ, նախաձեռնություն, ճարպկություն, հնարամտություն և այլն:

Մի քիչ ավելի մեծ յերեխաներին վոչ միայն պետք է սովորեցնել առանց ուրիշների ոգնության հանվել, հագնվել, ուտել, այլև նրանց վորոշ չափով ոգտագործել տնային և այլ թեթեւ աշխատանքներում, որինակ՝ յերեխան կարող է հատակը մաքրել, բաժակով լամելու ջուր բերել, կատարել զանազան հանձնարարություններ և այլն:

Առհասարակ այսպիսի կանոն պետք է ունենալ, այն, ինչ յերեխան ինքը կարող է անել, ծնողները չպետք է վոչ մի դեպքում կատարեն: Ավելորդ խնամակալությունը, յերեխայի ամեն մի քայլին մասնակցություն հանդես բերելը, ոգնելը նրան այնտեղ, վորտեղ դրա կարիքը բոլորովին չկա, կարող է յերեխային դարձնել ծուլ, ալարկոտ, ամեն ինչ ուրիշի վրա ձգելու ցանկություն, ինչպես և ինքնուրույն աշխատանքի անընդունակություն: Բացի դրանից, յերեխայի աշխատանքը մենք ինքներս կատարելով, նրան զրկում ենք այն մեծ բավականությունից, վոր ստանում է մարդն իր պարտականությունները բարելուդնորեն կատարելու հետեւմանքով, և առհասարակ այն մեծ հաճույքից, վոր մարդուն պատճառում է աշխատանքը:

13. ՈՐԻՆԱԿՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒ- ԹՅՈՒՆԸ

Յերեխան իր բնավորության գծերից և վոչ մեկը պատրաստի ձեռք չի բերում: Նրա կամքը, զգացմունքը

ները, վարվեցողութունը, մի խոսքով նրա վողջ բնավորութիւնը կոփվում է, կառուցվում է սոցիալական միջավայրի ազդեցութեան տակ: Յերեխան ինքը, դեռ-յնվս փոքրիկ, անկազմակերպ եյակ լինելով, աշխատում է իր զարգացման ընթացքում նմանվել մեծերին: Յերեխան մեծերի շարժ ու ձեւերը, բնավորութեան գծերը ձեռք է բերում նմանվելով, այն, ինչ վոր անում են ուրիշները՝ մեծերը, նույնն է անում և յերեխան: Իհարկէ, այդ նմանվելու գործը մի կամ յերկու որովա բան չէ: Դա կատարվում է վոչ թե միանշամից, այլ աստիճանաբար, յերբեմն նույնիսկ անգիտակից կերպով: Որինակ փոքրիկ Լւն, վորի յերկրորդ տարին դեռյնվս չի լրացել, մորից թագուն ամբողջ յերեսը սպիտակեցնում է պուդրայով կամ «ներկում» շրթունքները: Մեծերի որինակներն ազդում են յերեխաների բարոյական գիտակցութեան վրա, նրա կամքի և զգացմունքների վրա: Շատ անգամ յերեխային խրատելը, բարկանալը, նեղանալը անգոր են անելու այն, ինչ վոր անում է դրական որինակը:

Այսպիսով, արիւնակը դաստիարակչական ամենահիմնական միջոցներից մեկն է: Այնտեղ, վորտեղ յերեխան տեսնում է կեդտոտութիւն, թափթփվածութիւն, անտարբերութիւն, կոպտութիւն, հայոյանք, նա ձեռք է բերում միայն այդպիսի հակակրելի գծեր:

Յեթե մայրը և հայրը շարունակ դժգոհում են, գանգատվում իրենց աշխատանքից, ապա հասկանալի չէ, վոր յերեխայի մեջ փոքր հասակից առաջանում է վատ վերաբերմունք դեպի աշխատանքը: Յեթե յերեխան իրենց տանը լսում է բամբասանք ուրիշների հասցեյին, դեռ ու դեն վատ լուրեր տարածել, ինքն

եւ դառնում բամբասանք, լուրեր հաղորդող, ուրիշի վայանքի մեջ իր քիթը խոթող: Յեւ ընդհակառակը, վորտեղ յերեխան տեսնում է քաղաքավարութիւն, կուլտուրականութիւն, մարդկային վերաբերմունք, փոխադարձ հարգանք, ազնվութիւն, ճշմարտութիւն, հասկանալի չէ, վոր յերեխան ինքն եւ այդպես սովորում և այդպես եւ վարվում:

14. ԻՆՉՊԵՍ ՏԱԼ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Իհարկէ, չպետք է միայն բավականանալ յերեխաներին լավ որինակներ ցույց տալով, հարկավոր է նաև, վորպեսզի մենք յերեխային ցույց տանք կոնկրետ ոգնութիւն, այսինքն ասենք, թե ինչը կարելի չէ և ինչը վոչ: Յերեխան այդպիսի ոգնութեան մեծ կարիք ունի:

Ամենից առաջ ասենք, վոր բղավելով, ջղայնանալով յերեխային վոչինչ սովորեցնել չեն կարող: Չափազանց քիչ են ոգնում նաև այսպիսի ընդհանուր բնույթի խոսքեր՝ «չէս ամաչում», «անհարմար չէս զգում» և այլն: Յերեխային խորհուրդներ պետք է տալ վոչ թե ընդհանրապես, այլ միշտ կոնկրետ, յերեխայի տվյալ քայլը գնահատելով և այդ գնահատականը միշտ կոնկրետացնելով: Որինակ՝ յերեխային զգուշացնում ենք՝ «այդպես մի անի, լավ տղաներն այդպես չեն անում», «ներան մի նեղացնի, փոքր ե», «ժամացույցին ձեռք տալ չի կարելի, կկոտրվի» և այլն:

Պետք է ասել, վոր վորոշ յերեխաներ վատ քայլ են անում առանց հասկանալու, դրա համար եւ անհրաժեշտ է, վոր ոգնենք նրանց հասկանալու, գնահատելու կատարված քայլը: Որինակ՝ վորոշ յերեխաներ մեծ հաճույք են զգում կենդանիներին չարչարելուց,

առանց հասկանալու, վոր դա շատ վատ է: Պետք է
այս բանը վոչ միայն արգելել, այլև յերեխային
կոնկրետ կերպով համոզել, թե ինչու կենդանիներին
չարչարել չի կարելի: Յերեխան չարչարում է կենդա-
նիկներին նրա համար, վորովհետև վոչ վոք չի ասել,
վոր դա վատ է: Դեռ ավելին՝ յերեխաներին տրվելիք
ցուցումները, խորհուրդները վոչ միայն պետք է լինեն
կոնկրետ, այլև միշտ զուգակցվեն լավ որինակներով:
Ինչպես մանկավարժները մեկն են ասել՝ «այսպես, ինչ-
պես յերեխան սովորում է քայլել քայլելով, վազել
վազելու միջոցով, խոսել խոսելով, գրել գրելով, այդ-
պես էլ նա սովորում է լսել, լսելու միջոցով, զուսպ
լինել իրեն զսպելու միջոցով, համբերել համբերու-
թյամբ, լինել համարձակ համարձակությամբ և այլն:
Յերեխայի ամեն մի քայլին չպետք է հետևել ու
շարունակ խոսել նրա վրա, ուղղել յերեխայի յուրա-
քանչյուր քայլը և առհասարակ նրան չպետք է ձանձ-
րացնել անտեղի և վոչ անհրաժեշտ միջամտություն-
ներով: Կան ծնողներ, վորոնք իրենց դիտողություն-
ներով խեղճ յերեխային ուղղակի հանդիստ չեն տա-
լիս. որինակ՝ «մի՛ վազիր», «եդ ի՛նչպես ես բղավում»,
«հանգարտ նստիր» և այլն:

Յերեխան այսպիսի հաճախակի նկատողու-
թյուններից և այդ նկատողությունների կրկնու-
թյունից ձանձրանալով, վարժվելով, այլևս դրանց վրա
և վոչ մի ուշադրություն չի դարձնում:

15. ՅԵՐԵԽԱՅԻ ՄԵՋ ԶՊԵՏՔ Ե ԶԱՐԳԱՑՆԵԼ ՅԵՍԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Սկզբնական շրջանում յերեխան բավականին ան-

զոր մի եյակ է ներկայացնում իրենից: Պարզ և, վոր
վաղ մանկական հասակում յերեխայի վոզը զանկու-
թյուններն ու պահանջները, հաճույքը, տհաճությունը
իրենց հիմքում պետք է ունենան իր «յեսք»: Յե-
րեխան ինքն է ուրիշի խնամքին յենթակա, դրա հա-
մար էլ նա ուրիշների հանդեպ ոգնելու ցանկություն-
ներ չի կարող ունենալ: Այդ է պատճառը, վոր յերե-
խան սկզբնական շրջանում իրերի և առարկաների
մասին հատկացողություն է կազմում յենկելով իր
«յես»-ից:

Այսպիսով, հենց սկզբում, յերեխայի մոտ՝ նրա
ֆիզիոլոգիական կառուցվածքի պատճառով՝ կարող են
յեսասիրական վորոշ հատկություններ լինել: Դրա մեջ
գատապարտելի վոչինչ չկա և հանդիսանում է վաղ
մտնական հասակի առանձնահատկություններից մե-
կը:

Բուրժուական դաստիարակությունն աշխատում է
յերեխայի մեջ արհեստականորեն զարգացնել և հետա-
գայումն էլ տիրապետող դարձնել յեսասիրական դժե-
քը, վորոնք հետզհետե, ժամանակի ընթացքում հակա-
կոնկրետիվիտատական, եգոիստական բնույթ են ստանում:
Խորհրդային դաստիարակությունը նպատակ ունի յերե-
խայի զարգացումն այնպես կազմակերպել, վորպեսզի
նրա յեսասիրական ձգտումները աստիճանաբար վերա-
ճեն կոնկրետիվիտատականի, վորպեսզի՝ նրա անձնա-
կանը վոչ թե հակադրվի, այլ պայմանավորվի հա-
մայնալինով: Դրա համար էլ ամենից առաջ հարկավոր
է, վորպեսզի մենք յերեխայի մեջ չմտցնենք այն միա-
քը, վոր իբր թե նա արտակարգ ավելի յերեխա չէ,
վոր ուրիշները նրա նման չեն, վոր ինքը բարի չէ,

խելոք, հասկացող, գեղեցիկ, հրաշալի, մի խոսքով բացառությունն է կաղմում մյուս յերեխաների նկատմամբ:

Միաժամանակ յերեխան չպետք է կարծի, վոր ինքն իր ծնողների ուրախության և կյանքի միակ պատճառն է, վոր առանց նրան ծնողների կյանքը կիսավարի, վոր իրեն սիրում են, գրկում, գուրգուրում, խնամում ըստ արժանույն:

Մենք կյանքում կարող ենք գտնել այգալիսի հայրիկներին, մայրիկներին, պապիկներին, տատիկներին ու մորաքույրների համար պաշտամունքի առարկա դարձած յերեխաներ, վորոնք իրականում իրենցից ներկայացնում են մի մի փոքրիկ, յերես առած բռնակալներ, վորոնց մեջ աստիճանաբար մարմնանում են բնավորության ամենավատ յեսապաշտական-յեսասիրական գծերը: Պետք է հրաժարվել ավելորդ գուրգուրանքներից, ձանձրացնող հոգատարությունից և, վոր ամենագլխավորն է, յերեխային ուղղված այսպիսի սիրային ղեղումներից՝ «լուսնյակս», «արևս», «կյանքս», «առանց քեզ ինչ կանի մաման», «մեռնեմ քեզի» և այլն: Նման խոսքերը յերեխայի մեջ զարգացնում են ինքնահավանություն, գոռոզություն և անբարտապանություն:

Յերեխան իր հագուստով, կյանքի ձևվերով վոչընչով չպետք է տարբերվի իր ընկերներից: Ծնողների հոգատարությունը վոչ թե նրանում պետք է կայանա, վոր նա իր յերեխային հագուստով, արտաքինով աշխատի ցուցահանել, վորպեսզի աչքի ընկնի, ուրիշներից տարբերվի, այլ իսկակա՞ն հոգատարությամբ:

Մինչդեռ վորոշ ծնողներ իրենց հոգատարությունը, սերն ու գուրգուրանքն արտահայտում են նրանով, վոր աշխատում են պճնել, զարդարել, հագցնել իրենց յերեխաներին արտակարգ կերպով, թանկագին կտորներով: Պարզ է, այգալիսի հոգատարության հետեւանքը կարող է զգվել յեսասիրություն առաջացնել, յեթե չխոսենք դեռ այն մասին, թե յերեխան իրեն վորքան կաշկանդված կզգա այդ հագուստների և բարձրակրունդ կոշիկների մեջ:

Յեա գիտեմ նույնիսկ դեպքեր, յերբ յերեխաները իրենցից մի քանի քայլ հեռու գտնվող դպրոցը գնում և վերադառնում են ավտոյով: Յեթե նրանց ծնողները դիտելու լինեյին այգալիսի յերեխաների ավտոյի մեջ փքված, գոռոզ ու արհամարհական հայացքները, վորը գցում են նրանք իրենց դասընկերներին, այսպես ասած «հասարակ մանուկների» վրա, իհարկե կհասկանալին իրենց «խնամքի» արժեքը:

16. ՅԵՐԵՒԱՅԻ ՄԱՐՄԻՆԸ ՊԵՏՔ Ե ԿՈՓԵԼ

Թուլամորթության, անկարողության, անուժության դեմ պայքարելու հիմնական միջոցներից մեկը հանդիսանում է յերեխայի մարմնի կոփումը, մարդելը, նրան զանազան դժվարություններին սովորեցնելը: Յերեխան կարող է խիզախ և համարձակ լինել միայն այն դեպքում, յերբ ունի առողջ, ամեն տեսակի պայմաններին դիմացող ֆիզիկական կառուցվածք:

Պրակտիկայում կարելի չէ տեսներ, թե ինչպես տաք պահված, համարյա «բամբակի մեջ դրված» յերեխան ամենավոքը բանից անգամ հիվանդանում է, իսկ աննշան հիվանդությունն անգամ ծանր ազդեցու-

թյունն ե թողնում նրա վրա: Որինակ՝ իմ ծանոթներից մեկի 4 տարեկան յերեխան իր տարիքից շատ ցածր ֆիզիկական կառուցվածք ունեցող յերեխա յե. նա վտիտ ե, փոքրահասակ, դեղնած, վազելիս շունչը կտրվում ե և այլն: Նա չի դիմանում վոչ շոգին և վոչ ցրտին: Ամենաթույլ քամին անգամ նրան անկողին ե դրում: Չնայած այս բոլորին պիտի ասել, վոր ծնվելիս շատ առողջ յերեխա յեր և համարձակ կարելի յե ասել, վոր ծնողները ավելորդ վախն ու հոգատարությունը դարձան նրա վատ աճեցողության պատճառը: Նրանք վախենում եյին յերեխային փողոց հանել, մեկ ցուրտ ե, մեկ քամի յե, մեկ արե ե, մեկ ամպ ե, անձրեւ կարող ե գալ և այլ պատճառաբանություններ բերելով, յերեխային միշտ պահում եյին տանը: Ձմեռը սենյակը միշտ լավ եր տաքացվում, յերբեմն ել շունչը կտրելու չափ, իսկ ամառվա շոգին յերեխայի հագին եր լինում տաք ֆուֆայկան՝ մինչև վիզը կոճկած: Բավական եր, վոր նա ասեր «գլուխս ցավում ե», վորպեսզի ամբողջ տունն իրար անցներ. ծնողներն այդպիսի դեպքերում նրան իսկույն յեվեթ պառկեցնում եյին անկողնում, վազում բժշկի հետեւից, յերեխային քրտնեցնում: Մի խոսքով նրան ներշնչում եյին, վոր նա ծանր հիվանդ ե:

Իբրեւ վտիտ յերեխա նա ուտում եր այնքան, վորքան կարող եր, բայց այստեղ կարևորն այն ե, վոր նրան սովորեցրել եյին թեկուզ ամեն մի պատառ հացն ուտել նազ ու տուգով, հազար ու մի խնդրանքով, այսինքն փաստորեն նրանք յերեխային զրկել եյին բնական ախորժակից և ուտելուց հաճույք ստանալու մեծ բավականությունից: Հայտնի յե, վոր լավ

մարսելու հիմնական նախապայմաններից մեկն ախորժակն ե: Տարվա բոլոր յեղանակներին նրան միշտ կարելի յեր տեսնել դալկացած, իսկ նույն բակում ապրող և նրան ազգակից մի այլ յերեխա իր ամբողջ կյանքն անց ե կացնում առանց հիվանդությունների, առանց շատ հագնվելու և միշտ փողոցումն ե, արեի և անձրեւի տակ:

Այս բոլորն ասում են այն մասին, վոր յերեխային պետք ե վարժեցնել բնական յեղանակներին, նրա մարմինը պետք ե կոփել բնական որենքներով:



« Ազգային գրադարան »



NL0152960

